



նախատեսում է առանց տոկոսի ապրանքային վարկերի հանձնում, փաստորեն, ապառիկ բնույթ է կրում եւ առանձին հաշվարկման ենթակա չէ:

- ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕՕՕՕ Օ ՕՕՕՕՕՕ

- Խնդրեմ: Արտոնյալ ագրովարկերի նախագծի երկրորդ բաղադրիչով, որը նախատեսում է առավելագույնս 8 տոկոսով միջին եւ խոշոր ֆերմերների վարկերի շնորհում, Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում տրվել է 142 վարկ: Դրանից 112-ը շնորհվել է անասնապահության, 13-ը` բանջարաբուծության, 4-ը` մեղվաբուծության, 5-ը` ձկնաբուծության, 5-ը` խառը տնտեսական գործունեության եւ մեկական` ջերմոցային տնտեսության, հատիկայինների արտադրության ու ոչխարաբուծության համար: Բնականաբար, յուրաքանչյուր ուղղության հաշվով տրված վարկի չափը պայմանավորված է ինչպես տնտեսության իրական վիճակից, այնպես էլ` հնարավորություններից: Ինչ վերաբերում է երրորդ բաղադրիչին, որը նախատեսում է առավելագույնս 3 տոկոսադրույքով գյուղատնտեսական արտադրությունների ֆինանսավորմանը, ապա Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում այդ բաղադրիչի սպասարկումից օգտվել է 10 սուբյեկտ: Չորսը ստացած գումարն ուղղել են կաթի վերամշակման արտադրությանը, երեքը` անասնապահության զարգացմանը: Այդ բաղադրիչով մեկական վարկ տրվել է ձկնաբուծության, ոչխարաբուծության եւ խառը տնտեսական գործունեությանը:

- ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕ, ՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ Օ, ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ, ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕ Օ ՕՕՕՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ

- Իրոք, նախարարությունը հանդես է եկել նման նախաձեռնությամբ: Գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիան հայտարարել է, որ անկախ գործարարի կարգավիճակից, կոոպերատիվներում միավորված ֆերմերները պետությունից կստանան գրանտ, որը հարկադրված չի լինի: Պետությունը հնարավորինս կաջակցի նման միավորումների կազմավորմանը: Ֆինանսների նախարարությունն արդեն պատրաստել է մի շարք նախագծեր, այդ թվում` ուղղումներ հարկային օրենսգրքում, ըստ որի, կոոպերատիվներին կշնորհվեն առանձին արտոնություններ:

Ամենայն հավանականությամբ, մոտ ժամանակներում Վրաստանի գյուղատնտեսության նախարարության տեղեկատվական ծառայությունների եւ տարածաշրջաններում տեղական վարչության ներկայացուցիչները հանդիպումներ կանցկացնեն բնակիչների հետ իրականացվելիք փոփոխությունների պարզաբանման եւ կոոպերատիվների առավելության վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու նպատակով: Հիշեցնեմ, որ գյուղական կոոպերատիվների զարգացման համար Եվրամիությունը հատկացրել է 40 միլիոն եվրո:

ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕ